Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

№ 14 ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՍԵՐԻԱ № 14

613·6
Ի-62

ԻՆՉՊԵՍ ՊԱՀՊԱՆԵԼ ՈՒԺԵՐՆ ՈՒ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆՆ ԱՐՇԱՎԻ ԺԱՄԱՆԱԿ

ԱՌԺՈՂԿՈՄԱՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 1931

26.04.2013

ՊԵՏՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ
ՊԱՏՎԵՐ 4563
ԳԼԱՎԼԻՏ 6797 (Բ)
ՏԻՐԱԺ 5000

613.6
Ր-62
ալ.
20 JUL 2010

ԿՌՎՈՂԻ ԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ՀԱՂԹԱՆԱԿԻ ԳՐԱՎԱԿԱՆՆ Է

Խորհրդային յերկիրը թշնամիներից—կապիտալիստներից ու կալվածատերերից պաշտպանելու համար պետք է ունենալ գիտակից, առողջ և ուժեղ կարմիր բանակ, պետք է ամբողջ աշխատավորության ուժերի հսկայական լարում:

Միայն առողջ բանակն է կռվի ընդունակ:

Դրա համար կարմիր բանակի յուրաքանչյուր նորակոչ պարտավոր է կյանքում կիրառել այն բոլոր կանոնները, վորոնք ողնում են նրան պաշտպանվելու հիվանդություններից և ամրապնդելու առողջությունը՝ թշնամու դեմ հաղթանակ տանելու համար:

ՈԳՆԻՐ ԶՈՐԱԿՈՉԱՑԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ

Զորակոչի ժամանակ, կարմիր բանակ են ընդունում միայն նրանց, ովքեր իրենց առողջությամբ ընդունակ են զինվորական ծառայության: Դրա համար զորակոչային հանձնաժողովներում բժիշկները ուշադրությամբ զննում են ամեն մի նորակոչի, չա-

2364

փում են նրա բարձրությունը, կշիռը, գլխի չափը դիմը և վորոշում, թե արդյոք առողջ են՝ սիրտը, թոքերը և մյուս ներքին գործարանները:

Զորակոչային հանձնաժողովն առաջնորդվում է համամիութենական հեղափոխական զինվորական խորհրդի հրամանով, վորտեղ ճիշտ կերպով ցույց է տրված, թե ի՞նչպիսի հիվանդություն ունեցողները կարող են ծառայել Կարմիր բանակում և ի՞նչպիսի հիվանդություն ունեցողներն ազատվում են զինվորական ծառայությունից:

Սմեն մի նորակոչիկ պետք է իմանա, վոր այն հարցը, թե ինքը պե՞տք է ծառայության կանչվի թե ազատվի, վորոշվում է վոչ թե զորակոչային հանձնաժողովի հայեցողությամբ, այլ Խորհրդային Իշխանության ճիշտ ցուցմունքներով:

Ցերբեմն նորակոչիկները, կամենալով ամեն կերպ մտնել Կարմիր բանակ՝ հայտնում են զորակոչային հանձնաժողովին, վոր իրենք առողջ են և չեն հայտնում իրենց հիվանդությունների մասին: Դրանով ոգտի փոխարեն նրանք /ինաում են Կարմիր բանակին, վորովհետև զինարշավի կամ պատերազմական պայմաններում, յերբ պահանջվում է տոկունություն և ուժերի մեծ լարում, նրանք յերբեմն հիվանդության պատճառով, անկարող են լինում կատարելու իրենց վրա դրված պարտականությունները: Դրա համար էլ, մի թաղցնիր քո հիվանդությունները զորակոչային հանձնաժողովից:

Սվելի մեծ վնաս են հասցնում Կարմիր բանակին նրանք, ովքեր առողջ լինելով հանդերձ, աշխատում են հիվանդ ձևանալ: Նորակոչիկները պիտի լավ իմանան, վոր բժիշկները կարող են վորոշել, թե ո՞վ է իսկապես հիվանդ և ո՞վ է հիվանդ ձևանում:

Այդ պատճառով էլ մի ճշնի հիվանդ ձևանալու. խնայիր, վոր ամեն մի վորձ, վորն արվում է կեղծիքի միջոցով ազատվելու զինվորական ծառայությունից, իր քաղաքացիական պարտքը կատարելուց, շատ խիստ կերպով պատժվում է:

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿ ԿՈՉՎՈՂՆԵՐԻ ՄԵՋ ՁՊԵՏՔ Ե ԼԻՆԻ ՀԱՐԲԵՑՈՂՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՊԱՐԱՊ-ՍԱՐԱՊ ԹՐԵՎ ԳԱԼՈՒ ՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Գիտակցաբար ու արիաբար են գնում նորակոչիկները Կարմիր բանակ իրենց ազատությունը, իրենց գործարանները ու հողը կապիտալիստներից պաշտպանելու համար: Նրանք իրենց դլուխը ողիով կամ դինով թմրեցնելու վոչ մի պատճառ չունեն:

Հարբեցողությունը Կարմիր բանակին մեծ վնաս կարող է հասցնել:

Կարմիր բանակն ուժեղ է իր դիսցիպլինայով (դիսցիպլինայով):

Վոդելից խմիչքները խանգարում են կարգապահությանը և տանում են մարդկանց դեպի զանազան հոնցաղործություններ:

Հարբած կարմիր բանակայինը հեշտությամբ կարող է դուրս տալ զինվորական գաղտնիքը լրտեսներին և դատնալ մատնիչ:

Ցուրաքանչյուր նորակոչիկ պետք է հիշի, վոր կարմիրը յերգում ասում՝ պարտավորվում է գալուչանալ

և զգուշացնել նաև իր ընկերներին, վոր հեռու մնան այնպիսի արարքներից, վորոնք ատորացնում են Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունների Միության քաղաքացու արժանապատվությունը:

Կարմիր բանակի նորակոչների մեջ չպետք է լինի հարբեցողություն:

ԶԳՈՒՇԱՑԻՐ ՎԵՆԵՐԱԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

Ամենից հաճախ վեներական հիվանդություններով վարակվում են հարբած դրության մեջ: Հարբած մարդն ավելի շուտ, քան վոչ հարբածը, սեռական հարաբերության մեջ և մտնում հենց առաջին պատահական կնոջ հետ և վարակվում է վեներական հիվանդությամբ: Վեներական հիվանդությունները քայքայում են մարդու առողջությունը: Նրանցից հեռու մնալու համար՝—

Ցերբեբ մի խմիր վոգելից խմիչքներ, զգուշացիր սեռական հարաբերություն ունենալ պոռնիկների ու պատահական կանանց հետ:

ԶՈՐԱՀԱՎԱՔՄԱՆ ԿԱՑԱՆՈՒՄ ՄԱՔՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՀՊԱՆԻՐ ՑԵՎ ՆՈՒՅՆԸ ՊԱՀԱՆՋԻՐ ՔՈ ԸՆԿԵՐՆԵՐԻՑ

Զորահավաքման կայանում նորակոչիկները պետք է սովորեն մաքրության, պահպանեն այն կանոնները, վորոնք հետագայում մշտապես կատարելու են զորանոցներում: Մաքրություն պահպանելը —առողջությունը պահպանելու առաջին պայմանն է:

Բնակարանում որինակելի մաքրություն պահպանիր: Ինքդ մի կեղտոտիր և մի թույլ տա ուրիշներին կեղտոտելու:

Մի թքիր հատակին. հաճախ թուքը պարունակում է թոքախտի վարակ: Թքիր միմիայն թքամանի մեջ: Մի ծխիր այն շենքում, վորը հատկացրած է բնակության: Մի թունավորիր ծխախոտի ծխով չծխող ընկերներիդ: Ծխախոտի քթթուկները մի ձգիր հատակին: Մի շարունակիր ծխել ուրիշի ծխած գլանակը: Ուրիշի բերանի գլանակը ծխելով՝ հեշտությամբ կարելի է վարակվել սիֆիլիսով և այլ հիվանդություններով: Անկողնիդ մաքուր պահիր: Կոշիկներով մի պառկիր անկողնիդ վրա: Մի պահիր անկողնիդ մեջ կողմնակի իրեր: Քեզ տրվող մթերքները մաքուր պահպանիր: Մի ուտիլ ընդհանուր ամանից: Ունեցիր քո սեփական գդալը և պահիր մաքուր: Ուտելուց առաջ ձեռներդ լվա, վորպեսզի կեղտոտ ձեռներովդ վարակ չտանես բերանդ:

Միշտ մաքրությամբդ որինակ ծառայիր ուրիշներին:

ԶԳՈՒՇԱՑԻՐ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ ՀԻՎԱՆԴԱՆԱԼՈՒՑ

Զորահավաքման կայանից նորակոչիկներին սովորաբար ուղարկում են նշանակված տեղը յերկաթուղով: Այդ պատճառով յուրաքանչյուր նորակոչիկ պիտի իմանա, թե ինչպես պիտի իրեն պահի ճանապարհին, վորպեսզի չհիվանդանա և առողջ հասնի իր զորամասը:

Վագոններում մաքրություն պահպանիր: Մի կեղտոտիր, վագոնների հատակին մի թքիր: Գնացքի շարժման միջոցին մի նստիր վագոնի սանդուխքների վրա և վագոններից ու պատուհաններից դուրս մի ցցվ-

վիր։ Մինչ գնացքի լրիվ կանգ առնելը՝ վագոնից ցած մի ցատկիր և մի նստիր վագոն գնացքի շարժման միջոցին։ Դռան փեղկերը բաց պահիր միայն մի կողմից։

Սառամոքսա-աղիքային հիվանդություններից զերծ մնալու համար ճանապարհին հում ջուր մի խմիր։ Զինվորական ծառայողներին կայարաններում ճրիտաբար տրվում է տաք ջուր և միշտ այնտեղ կարելի է գտնել հատուկ դրված փակ ամանների մեջ եփած և ապա սառեցրած ջուր։ Կայարաններում լցրու ջրամանդ թեյով կամ ջրով։

Գնացքի կանգառման ժամանակ, մթերքներ գնիր վոչ թե մատնավոր ծախողներից, այլ բուֆետից կամ կոոպերատիվ խանութից։

Գնացքի կանգառման ժամանակ ոչտվիր քո բնական կարիքների համար միայն հատկապես չինված արտաքնոցներով և մի կեղտոտիր յերկաթուղու ճանապարհն արտաթորություններով։

ՈԳՆԻՐ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿՈՒՄ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ

Կարմիր բանակում մեծ աշխատանք է տարվում կարմիր բանակայիններին հիվանդություններից պաշտպանելու համար։ Անհրաժեշտ է, վոր յուրաքանչյուր նորակոչիկ հասկանա, թե ինչ նշանակություն ունի այս կամ այն աշխատանքն առողջության պահպանման համար։ Այդ դեպքում նա գիտակցորեն կվերաբերվի և ամենալավ հնարավորություններ կստեղծի նրա գործադրման։

Զինակոչից հետո հենց առաջին ոչերում քոլոր

նորակոչիկները յենթարկվում են սանիտարական ճշտիրման։

Ի՞նչ բան է սանիտարական մշակումը։

Սանիտարական մշակումը—դա մազեր խուզելն և, բաղնիսում լողանալը և սպիտակեղեն փոխելը։ Լոգացողներն իրենց կեղտոտ սպիտակեղենները հանձնում են շորեր հանելու վայրում, իսկ լողանալուց հետո նրանց տրվում է մաքուր սպիտակեղեն։ Եթե բժիշկը կարևվոր է գտնում, միչև կարմիր բանակայինների լողանալը, նրանց սպիտակեղենն ու զգեստները մի քանի բոպեյով դնում են հատուկ կամերաների մեջ, վորտեղ վոչնչանում են վոջիլներն ու նրանց անիծը (ձուերը)։

Այդ արվում է նրա համար, վոր բծավոր և վերադարձ տիֆի տարածվելու հնարավորության առաջն առնվի, քանի վոր հիվանդությունները փոխվում են հիվանդներից առողջներին վոջիլների միջոցով։

Զինվորական մասը գալու առաջին որերում նորակոչիկները պահվում են մնացած մասերից առանձին բնակարաններում, վորը կոչվում է սանիտարական ընդունարան։

Քանի զորակոչիկները գտնվում են ընդունարանում, բժիշկները դիտում են, թե արդյոք չի՞ յերևվում նրանցից վորևե մեկի վրա վարակիչ հիվանդություն, վորով նա կարող եր հիվանդացած լինել տանը կամ ճանապարհին։

Ընդունարանում գտնված ժամանակ նորակոչիկները յենթարկվում են սանիտարական մշակման, վորից հետո միայն տեղավորվում են այլ մասերի հետ։ Այդ ամենն տրվում է նրա համար, վոր վարակիչ հիվանդություն-

ները մյուս զինվորական մասերում տարածվելու հնար
վորության առաջն առնվի։ Զորակոչից անմիջապես հե
տո բոլոր նորակոչիկները յենթարկվում են պատվաստի
ծաղկի, բծավոր տիֆի և մի քանի ուրիշ հիվանդու-
թյունների դեմ։ Մի վախիր պատվաստումներից, նրան,
բոլորովին անվնաս են և քեզ կարող են պաշտպանել
վտանգավոր հիվանդություններից։

Յեթե քեզ համար անհասկանալի յեն ձեռք առած
միջոցներից վորևե մեկը, վոր ցույց է տրվում Կարմիր
բանակում առողջության պահպանության համար,
հարցրու բժշկին. նա կբացատրե քեզ նրա նշանակու-
թյունը, իսկ դու յել բացատրիր քո ընկերներին։

ՍՈՎՈՐԻՐ ՊԱՀՊԱՆԵԼ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԴ

Անթերի հաճախիր բժիշկների, նրանց ոգնականների
և սանիտարական հրահանգիչների զրույցներին, վոր
լինում են Կարմիր Բանակում։ Սանիտարական դրա-
գիտությունը կոգնե քեզ պահպանելու առողջությունդ
և հաղթելու թշնամուդ։

Հիշիր, վոր առողջությունդ անհրաժեշտ է քո
հողի և գործարանների պաշտպանության և կապիտա-
լիստներին հաղթելու համար։

ՀՀ Ազգային գրադարան
NL0271057